

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ



Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Մայր Աթոռի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը նոյեմբերի 1-ին, երկուշաբթի օրը, Մայր տաճարում, երեկոյան ժամերգությունից հետո, ծայրագույն վարդապետական գավազանի իշխանություն շնորհեց Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցու հոգևոր հովիվ տ. Զարեզ վրդ. Պարոնյանին, որն ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

Տ. Զարեհ վրդ. Պարոնյանը ծնվել է 1940 թվականին Բուխարեստում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի հայկական դպրոցում: 1955—1959 թվականներին սովորել և ավարտել է Երևանի մանկավարժական ուսումնարանը:

1959—1961 թվականներին աշխատել է որպես ուսուցիչ Բուխարեստի հայկական դպրոցում: 1961—1963 թվականներին նա սովորել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում: 1963—1964 թվականներին հետևել է կրոնագիտական մի շարք դասընթացների Զագորսկի ռուսական ճեմարանում: 1964 թվականին պաշտպանել է իր ավարտաճառը՝ «Ստեփանոս վրդ. Լեհացու կյանքն ու գործը» թեմայով ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում:

1963 թվականին ձեռնադրվել է սարկա-

վագ: 1965 թվականին ս. Էջմիածնի Մայր տաճարում կուսակրոն քահանա է ձեռնադրվում տ. Ասողիկ եպս. Ղազարյանից:

1969 թվականին, ներկայացնելով «Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի կյանքն ու գործունեությունը» իր ավարտաճառը, մասնավոր վարդապետական իշխանություն է ստանում տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանից:

Տ. Զարեհ վրդ. Պարոնյանը 1967—1970 թվականներին հետևել է Բուխարեստի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի դասախոսություններին և պաշտպանել է իր ավարտաճառը՝ աստվածաբանության մագիստրոսի աստիճան ստանալու համար: Ռումին պատրիարքարանի պաշտոնաթերթում տ. Զարեհ վրդ. Պարոնյանը հրատարակել է մի շարք ուսումնասիրություններ հայ եկեղեցական իրավունքի մասին:

Տ. Զարեհ վրդ. Պարոնյանը երկար տարիներ անձնվիրությամբ պաշտոնավարում է Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցում որպես հոգևոր հովիվ:

Տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը մեր խոստումնալից, ավանդապահ և հոգելից եկեղեցականներից մեկն է, որն իր հոգու ողջ նվիրումով ծառայում է Հայաստանյայց առաքելական եկեղեցուն և հայ ժողովրդին:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանին այս առթիվ՝ մաղթելով նրան հետագա հաջողություններ հոգևոր ծառայության իր ասպարեզում: Վստահ ենք, որ նա իր անձնվեր ծառայությամբ կարդարացնի հայրապետական բարձր վստահությունը և իր ժողովրդի հույսերը: